



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԵԶ ԵՒ ԵՌԱԳՈՅՆ ԴՐՈՅԻ ՕՐՅՆՈՒԹԻՒՆ Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱԾԱՐԻՆ ՄԵԶ

Ծաբաթ, 28 Մայիսը, Հայաստանի անդրանիկ հանրապետութեան հիմնադրութեան 93րդ տարեդարձն է:

Կիրակի, 29 Մայիսին, Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան տօնին առջիւ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինումով, Թեմիս բոլոր Եկեղեցիներուն մեջ Հանրապետական Մաղթանք եւ յատուկ հոգեհանգիստ պիտի կատարուի «Վասն հոգւոց քաջամարտիկ զաւակացն ազգիս հայոց, որը անկան ի ճակատամարտին Սարդարապատի, Ղարաքիլիսէի եւ Բաշ Ապարանի եւ յայլ ճակատամարտս ի թուին 1918, վասն ազատութեան ազգիս հայոց»:

Առաջնորդ Սրբազնը պիտի հանդիսապետէ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Ս. Պատարագին, եւ անոր ընթացքին՝ Հանրապետական Մաղթանքի արարողութեան, պիտի կատարէ Եռագոյն դրօշի օրինութիւնը, եւ այս առիթով պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

THANKSGIVING PRAYERS ON THE 93RD ANNIVERSARY OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA

Saturday, May 28th, 2011 is the 93rd anniversary of the first Republic of Armenia. On this occasion and by the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, on Sunday, May 29th, Thanksgiving Prayers for the republic will be offered in all Prelacy Churches.

The Prelate will preside over Divine Liturgy at Holy Cross Cathedral in Montebello, where he will also preside over the Thanksgiving Prayers, conduct the blessing of the Armenian flag, and deliver the sermon.

ԱՉԳ. ՎԱՐԱՆ ԵՒ ԱՆՈՒԾ ՇԱՍՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱԽԱՐՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՃԱԿԵՐՏՆԵՐԸ ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ



Յայաստան իրենց ուխտագնացութենեն մօտաւորապէս ամիս մը ետք, Ազգային Վահան Եւ Անոյշ Համլեան վարժարանի աշակերտները Զորեցաբթի, 25 Մայիսի առաջոտուն, իբրեւ ուխտաւորներ այցելեցին Ազգային Առաջնորդարան, ուր ընդունուեցան թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք.

Մարտիրոսեանի եւ հոգեւոր հայրերու կողմէ, աղօթեցին, Առաջնորդ Սրբազն Յօր ծեռամբ Ս. Յաղորութիւն ստացան, ապա, նախաճաշի պահէ մը ետք, գեղարուեստական յայտագիրով մը պատուեցին հիւրընկալները:

Վարժարանի տևորենութեան կողմէ հաստատուած գեղեցիկ աւանդութիւն մըն է այս ուխտագնացութիւնը: Օգտուելով վարժարանին մերձակայութենեն, աշակերտները, իրենց ուսուցիչներուն եւ կարգ մը ծնողներու ընկերակցութեամբ հետիոտն հասան Ազգ. Առաջնորդարան ու առաջին հերթին, առաջնորդուեցան «Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն» մատուռ: Առաջնորդ Սրբազնին կողքին էին Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հայրերէն՝ աշակերտներուն կրօնի դասատուները՝ Արք. S. Վազգեն Քիւյ. Աթմաճեան եւ Արք. S. կոմիտաս Քիւյ. Թորոսեան: Յաւաքական աղօթք ետք, աշակերտներն ու անձնակազմի անդամները Ս. Յաղորութիւն ստացան ծեռամբ Առաջնորդ Սրբազնին: Ազգ. Առաջնորդարանի շրջափակին մէջ գտնուող յուշարձանին առջեւ միասնաբար լուսանկարուելէ ետք, աշակերտները առաջնորդուեցան «Տիգրան եւ Զարուիի Տէր Ղազարեան» սրահ, ուր տեղի ունեցաւ մտերմիկ հանդիպում մը: Աշակերտները ներկայացուցին երկու խմբային արտասանութիւն եւ դաշնակի վրայ երաժշտական երկու գործ: Գեղարուեստական բաժինին մասնակցութիւն բերաւ նաեւ վարժարանին տևորէնը՝ Տիար Վազգեն Մատենլեան, նուագելով դաշնակի վրայ: Իսկ վարժարանի ծնողներէն Տոքթ. Վահէ Փիրումեան, Յայաստան ուղեւորութենեն իբրեւ յիշատակ՝ իր դստեր հետ միասին Առաջնորդ Սրբազնին նուիրեց մեծադիր լուսանկար մը՝ Յաղարծինի վանքին, զոր «որսացած» եր իր ոսպնեակով:

Առաջնորդ Սրբազնը հակիրճ պատգամ մը ուղղեց աշակերտներուն: Յիսուսի այլակերպութեան դրուագը պատմելէ ետք, Առաջնորդ Սրբազնը նկատել տուաւ, որ աշակերտները, վերացած էին երանական ու խաղաղ պահէն, ցանկութիւն յայտնեցին, որ այդ պահը երկարէր. նոյնպէս ալ, շարունակեց Առաջնորդ Սրբազնը, շատ փափաքելի պիտի ըլլար, որ

աշակերտներու այցելութեամբ ու Ներկայացուած յայտագիրով ստեղծուած հաճելի պահը Երկարէր: Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց աշակերտներուն այս այցելութիւնը եւ յորդորեց, որ Վարժարանւն շրջանաւարտ ըլլալէ ետք, անոնց իրենց հոգիներուն ու կեանքերուն մեջ ամուր պահեն կրթական այս օճախին իրենց ճաշակած ոգեղին սնունդը եւ դառնան կամուրջ՝ յաջորդ սերունդներուն հետ: Առաջնորդ Սրբազանը նաեւ բարձր գնահատեց Վարժարանին տնօրէնը՝ Տիար Վ. Մատենեանը, փոխ տնօրէնուհին՝ Տիկին Ռիթա Գաբրիէլեանը, ուսուցիչներն ու ծնողները, այս այցելութեան յաջող կազմակերպումին համար: Վերջապէս, ան շնորհակալութեան ու դրուատիքի խօսք ուղղեց Տոքը. Վահէ Փիրումեանի, յուշանուերին համար:

Շնորհակալութեան հակիրճ խօսք մը արտասանեց Տնօրէնը, շնորհակալութիւն յայտնելով այս ջերմ ընդունելութեան համար, միաժամանակ դրուատելով փոխ տնօրէնուհիին եւ ծնողաօժանդակ մարմինին շանադիր աշխատանքն ու դպրոցի կեանքին մեջ անոնց ներդրումը:

Փակման աղօթք ետք, աշակերտները դպրոց վերադարձան, իրենց հետ տանելով յուշանուեր աղօթագիրքեր եւ այս Երկորդ ուխտաւորութենան հաճելի յիշատակներ:

CHAMLIAN SCHOOL GRADUATING CLASS VISITS THE PRELACY



by Principal Mr. Vazken Madenlian, Vice-Principal Mrs. Rita Kaprielian, teachers and Parent Support Committee members.

It has become a tradition for the graduating class to come to the Prelacy and receive Holy Communion prior to their graduation.

Upon their arrival, the students, teachers, and parents gathered at the "St. Dertad and St. Ashkhen Chapel" where they participated in a prayer service and received Holy Communion from the Prelate.

After breakfast and a group photo taken in front of the memorial monument at the Prelacy courtyard, the students headed to the "Dikran and

On the morning of Wednesday, May 25th, 2011, the graduating class of Vahan and Anoush Chamlian School visited the Prelacy where they were welcomed by H.E. Archbishop Moushegh Mardirossian and St. Mary's Church Pastors and religion teachers Rev. Fr. Vazken Atmajian and Rev. Fr. Gomidas Torossian. The students were accompanied

Zarouhie Der Ghazarian" Hall where they presented a cultural program of poetry and music.

Principal Vazken Madenlian also participated in the cultural program by performing a song on the piano. Parent Dr. Vahe Peroomian and his daughter then presented the Prelate with a framed picture of the Haghartsin Monastery which they had photographed in Armenia.

In his address to the students, the Prelate urged them to keep the Armenian spirit alive and strong in them wherever they may find themselves in the coming years, commended the administration and parents for organizing this annual visit to the Prelacy, and thanked Dr. Peroomian for the gift.

Mr. Madenlian expressed his thanks for the warm reception, and also commended the administration and parents for their service and contributions to the school.

The gathering came to a close with the Prelate's benediction.

ԱՐԵՒՏՏԵԱՆ ՄԵՐ ԹԵՍԵՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՅՈՒՐԴԻ ԾԱՄԱՅՔԱՅԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ



Եկեղեցիներու
Համաշխարհային
խորհուրդը 18-Ն 25
Մայիսին, Քիլսկթընի մէջ,
ճամայքա, ունեցաւ միջ-
եկեղեցական համաժողով
մը, որ յատկացուած էր
աշխարհի խաղաղութիւնը
յուզող հարցերու:

Ո. Աթոռոյս գահակալ
Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.
Կաթողիկոսին
տևողինութեամբ,

համագումարին մասնակցութիւն բերաւ պատուիրակութիւն մը, որուն
կ'անդամակցեին Կաթողիկոսութեան Սից-Եկեղեցական յարաբերութեանց
բաժանմունքի վարիչ Գեղշ. Տ. Նարեկ Արք. Ալեքսանդրեան, Վրեւելեան Թեմի
առաջնորդական փոխանորդ Գեղշ. Տ. Անուշաւան Եպսկ. Դասիելեան, Տիկին
Սեղա Խոտքշեան, Լիքանանեն, եւ բարեշնորհ Մարք. Սարկ. Շիրին՝
Ֆրեզնյեն (Վրեւելեան Թեմ):

Համագումարին կը մասնակցեին շուրջ 100 երկիրներէ աւելի քան
հազար պատգամաւոր. համագումարին ընդհանուր խորագիրն էր «Փառք ի
բարձունս եւ ձերկիր խաղաղութիւն»:

Կաթողիկոսութեան պատուիրակութեան անդամները լիարժեք
մասնակցութիւն բերին համագումարի այլազան աշխատանքներուն: Տ.
Նարեկ Սրբազան գործուն մասնակցութիւն բերաւ համագումարին

արդիւնքները ամփոփող յայտարարութեան պատրաստութեան մէջ, որ միշագգային ընտանիքին ուղղուած պատգամ մըն էր. գլխաւոր խորագիրներն են կենսոլորտի հարցեր, վայրագութիւն, ընկերային արդարութիւն, պատերազմներ եւ մարդկային իրաւունքներ: Եզրափակիչ պատգամին մէջ, Եկեղեցիները փառք յայտնեցին Աստուծոյ, խաղաղութեան իշխան Յիսուս Քրիստոսի միջոցով աշխարհին շնորհուած երկնային խաղաղութեան պարգեւին համար եւ վերանորոգեցին իրենց ուխտը՝ Ս. Յօգինվ սպառազինուած շարունակելու խաղաղութեան դեսպանները ըլլալու իրենց յանձնառութիւնը:

Այս խորհրդաժողովին Եզրակացութիւնները հիմնական դեր պիտի ունենան Եկեղեցիներու Յամաշխարհային Խորհուրդի յառաջիկայ գերաստիճանին, որ Խախատեսուած է 2013ին, Քորեայի Պուսան քաղաքին մէջ:

PRELACY REPRESENTATION AT WCC PEACE CONVOCATION



The Holy See of Cilicia participated in the World Council of Churches' International Ecumenical Peace Convocation (IEPC) in Kingston, Jamaica, May 18 to 25 with a 4-person delegation headed by H.E. Archbishop Nareg Alemezian, the Ecumenical Officer of the Catholicosate of Cilicia, H.G. Bishop Anoushavan Tanielian, Vicar General of the Eastern Prelacy, Archdeacon Mark Shirin representing the Western Prelacy and Mrs. Seta Margossian-Khedeshian,

from Lebanon, representing the Middle East Council of Churches.

With over 1000 delegates from over 100 countries, the IEPC convened on the sprawling campus of the University of West Indies with the theme "Glory to God and peace on earth".

The convocation schedule consisted of daily Bible study, common prayer, plenaries, workshops, and lectures. Cilician See delegates participated fully in the convocation and provided crucial administrative leadership in various activities throughout the week. Archbishop Alemezian played a key role in drafting the Convocation's message to the world, which summarized the week-long deliberations and IEPC's positions on the following crucial issues: Ecology, violence, social justice, war, and human rights.

The resolutions resulting from the IEPC will help set the tone and agenda for the World Council of Churches' General Assembly which will convene in Busan, Korea in 2013.
